

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԳ ԲՆՈՒՅՔԸ

Վ. ԳԱՐՐԻՆՆԱՆ

Դեռևս մեր դարասկզբին մարքսիստ-հեղափոխականները մշտապես կարե-վոր էին համարում գրականության խնդիրներին անդրադառնալը և գրողների ու գրական երկերի մասին իրենց խոսքը նպատակաուղղում էին ժողովրդի սոցիալ-քաղաքական շահերի պաշտպանությանը: Գրականության բարձր դերի գիտակցությունն էր, որ հեղափոխության գործին անմնացորդ նվիրված մտավորականությանը կապում էր գրական քննադատությանը: Հանրահայտ է, թե ինչ մեծ դեր են խաղացել Վ. Ի. Լենինի ելույթներն ու հոգվածները գրողների ու գրականության մասին: 1905-ին գրված «Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն» ուղենշային հոդվածից հետո Լենինը հաճախակի էր անդրադառնում գրականության հարցերին: Հայտնի են անցյալի դասական ժառանգության, նրա նորոգյա դերի արժեքավորման, ինչպես նաև գրական ձախ ուղղությունների, գրական տարբեր հոսանքների ձախությունների, գրական խոտանի դեմ նրա հիմնավոր ելույթները, սոցիալիզմի գաղափարը և աշխատավորության շահերը իսկական արվեստի ուժով պատկերող գրականության նրա պահանջները: Այդ իսկ պահանջների թելադրանք էին 1920 թ. Ռուսաստանյան երիտասարդական միության 3-րդ համագումարում Լենինի ելույթը Պրոլետկուլտի վրիպումների դեմ և Պրոլետկուլտի համագումարի բանաձևը՝ թելադրված նրա կողմից:

Գարասկզբին հայ իրականության մեջ գրական նոր քննադատության ըստեղծումն ու զարգացումը առաջին հերթին կապվում է պրոֆեսիոնալ հեղափոխականների՝ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ալ. Մյասնիկյանի, Արտ. Կարինյանի և մյուսների անվան հետ: Հայ մարքսիստ գրականագետ-քննադատների տեսական ու պրակտիկ հոգվածներում մշակվում են նոր տիպի գրական քննադատության հարցերը, մատնանշվում են այն ուղիները, որոնք զարգացման հեռանկարներ են բացում նոր ձևավորված պրոլետարական գրական հոսանքի համար և պայմանավորում սոցիալիստական հայ գրականության ձևավորումն ու զարգացումը:

Որպես ազգային հարցի կարևոր մի օղակ է քննում Շահումյանը ազգային գրականության խնդիրները՝ դիտարկելով այն սոցիալիստական հեղափոխության իրողության պայմաններում: Գրականության իսկական զարգացումը հնարավոր է միայն բռնության, քաղաքական հին կարգերի վերացման և ժողովրդի ազատ բնական զարգացման պայմաններում, ասել է՝ հեղափոխության հաղթանակի դեպքում, երբ ազգերը կապրեն փոխադարձ հարգանքի ու հավասարության պայմաններում: Ավելին, հեղափոխությունից առաջ Շահումյանը առաջադրում էր ապագայում ազգերի ֆեդերացիայի հարցը: «Տնտեսական գար-

գացման պրոցեսը բնական անհրաժեշտությամբ ավելի ու ավելի մոտեցնում է իրար՝ առանձին ազգերը: Այդ պատճառով անջատման պահանջը մենք կարող ենք պաշտպանել միայն բացառիկ դեպքերում: Ավելի հաճախ մենք կողմնակից ենք ազգերի մերձեցման և միության»¹, — գրում էր Շահումյանը «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» ուսումնասիրության մեջ:

Հիրավի, հեղափոխության հաղթանակից հետո գործնականորեն կիրառվում է ֆեդերացիայի սկզբունքը հենց լենինի ու կուսակցության կողմից, զրտնելով, որ այդ ձևը ժողովուրդներին ու ազգություններին միավորելու, միասնական տնտեսություն ու կուլտուրա ստեղծելու լավագույն ձևն է:

Այսպես, 1922-ի վերջին, սովետների համագումարի որոշմամբ կազմվում է ՍՍՀՄ-ը, Շարունակվում և նոր հուն է մտնում կուսակցության ազգային քաղաքականությունը, որի հիմքը իրավահավասար ժողովուրդներին՝ սոցիալիստական հասարակարգ կառուցողների դաշինքի սկզբունքն էր:

Տարիներ անց ֆեդերացիայի և հատկապես Անդրկովկասի ժողովուրդների այդ դաշինքի մասին խոսելով Ս. Զարենցը այն համարում է «պրոլետարիատի և աշխատավոր ժողովրդի մեծագույն նվաճումը խորհրդային իշխանության օրով» և հաստատում այն ճշմարտությունը, թե՛ «Տասնյակ տարիներ շարունակ «հայրենի» բուրժուազիանների կողմից իրար դեմ հանվող եղբայրակից ժողովուրդների պետական քաղաքական համերաշխությունը՝ խորհրդային անկախ հանրապետությունների ֆեդերացիայի ձևով՝ հնարավոր էր միմիայն պրոլետարական իշխանության ժամանակ, լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ»²: Սոցիալիստական ֆեդերացիայի իրողությունը ստեղծում էր ամենայնայն հնարավորությունները փոխադարձ ուժերով երկիրը կառուցելու և ձեվով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա ստեղծելու համար: Բացվում են փոքր ազգերի զարգացման նոր հեռանկարներ:

Նոր հուն է մտնում նաև հայ գրականությունը: Գրականությունն ու արվեստը արժանանում են կառավարական ուշադրության: Հիշենք, որ երկրի տրեստեսական տեսակետից ամենածանր՝ սովետական իշխանության հաստատման առաջին տարում կառավարությունը հատուկ կենսաթոշակներ է նշանակում նշանավոր գրողներին ու արվեստագետներին, եթե տեղում նրանք ապրում էին արտասահմանում: Այդ ուշադրության հավաստումն են Հովհ. Քումանյանի՝ Իսահակյանին 1921 թ. հոկտեմբերին հղած նամակի տողերը. «...Մեր այժմյան կառավարությունը շատ ավելի լավն է, քան կարող ես երևակայել: Մանավանդ գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհքում»³:

Հոկտեմբերյան հեղափոխության, լենինյան ազգային քաղաքականության, ՍՍՀՄ-ի ստեղծման մեծ դերի և հատկապես հայ ժողովրդի նոր վերածննդի մասին ադդ և հետագա տարիներին խանդավառությամբ են խոսել մեր նշանավոր գրողները:

1926 թ. առաջին անգամ Սովետական Հայաստան եկած Ավ. Իսահակյանը «խորհրդային Հայաստան» թերթի հոկտեմբերի 14-ի համարում գրում էր. «Հայ աշխատավոր ժողովրդի ֆիզիկական գոյությունն ու կուլտուրական ապահովությունը հնարավոր է միայն խորհրդային երկրի ու ռուսական մեծ ժողովրդի

¹ Ս. Շահումյան, Կուլտուրայի, արվեստի և գրականության մասին, Եր., 1981, էջ 121:

² Ս. Զարենց, Երկերի ժող., հ. 6, Եր., 1987, էջ 215:

³ Հ. Քումանյան, Երկերի ժող., հ. 4, 1989, էջ 422:

հետ... Առաջին անգամ ոտք դնելով Խորհրդային երկիրը, տեսա և այդ ինձ համար սիմվոլիկ բնույթ ստացավ, թե ինչպես Խորհրդային Միությանն իրականացնում է փոքր ազգերի ինքնորոշումը: Փոքր ազգերի ինքնորոշման մի կոնկրետ օրինակը համարելով Խորհրդային Հայաստանի գոյությունը, իր մի ուրիշ գոյության մեջ (տպագրված թերթի նոյեմբերի 29-ի համարում) Իսահակյանը բացում է այդ ինքնորոշման խորհուրդը. «Տեսնում եմ՝ ալբերի և մոխիրների միջից, խաղաղությամբ զրահավորված, կանգնում է աշխատավորական, Խորհրդային Հայաստանը համամարդկային գաղափարներով, համաշխարհային բովանդակությամբ և ազգային ոնով ու դեմքով» (ընդգծումը—Վ. Գ.):

Մեր փոքրիկ ածուն համազոր և համահավասար է համամիութենական հսկային, որն իր տիտանյան ուսն է դրել մարդկությունը վերաստեղծող ալբերի արդար, բացարձակ արդար կյանքի առարկայացման գործի տակ»:

Իսկ մի քանի տարի անց Փարիզի «Ապագա» թերթում նա գրեց. «Հայաստանի բնակչությունը մեկ միլիոն է, բայց նա մեծ է ու զորավոր, որովհետև իր հետ ունի 150 միլիոն ժողովուրդ»⁴:

Նոր Հայաստանի՝ ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքով պայմանավորված հզորության և նրա ազատ զարգացման հնարավորության ու գալիք հեռանկարների մասին հավատավոր մի ելույթ էր 1926 թ. Փարիզի «Ապագա» թերթում տպագրված «Բողոքը», որի տակ ստորագրել էին փարիզարենակ 14 մտավորականներ՝ Շիրվանզադեն, Արշակ Չոպանյանը, Տիգրան Կամսարականը, Լեոն Բաշլյանը, Վահան Մալեզյանը և ուրիշներ: Բողոքելով Խորհրդային Հայաստանի ինքնությունն ու նվաճումները անտեսող «կուսակցամուլ» գործիչ Ա. Ահարոնյանի հողվածի դեմ, մերկացնելով նրա զրպարտանքներն ու անարգանքները, հողվածի հեղինակները գտնում էին, թե իրենց համար «անհերքելի իրողություն մրն է, որ Հայաստան մը գոյություն ունի այսօր» և որ «ան իր գոյությունը կրնա պահպանել ու զարգացնել միայն Խորհրդային Միության հետ դաշնակցած»⁵:

Այդ նույն «Բողոքը» ստորագրողներից մեկը՝ բանաստեղծ Ռուբեն Որբերյանը 1928 թ. Փարիզի «Երևան» թերթում տպագրված իր խոսքի մեջ ասում էր. «Համայնավարական մաքուր սկզբունքներու կիրարկումը, պատմության մեջ աննախընթաց այդ փորձը՝ բարերար արդյունքներ տվավ մեր հայրենյաց համար և անխառն հիացումով է որ կդիտեմ շինարարական բազմաթիվ ձեռնարկումներու իրականացումը ԽՍՀՄ-ի եղբայրական հզոր ու անվերապահ աջակցությամբ»⁶:

Վահան Թեքեյանը գտնելով, որ «բոլոր ազգերը որքան մեծ, որքան պզտիկ պետք ունին իրարու օգնության» և որ մայր հողի «խորհրդայնացման տարեդարձը պետք է ընդունել իբրև հայ ազգին վերջնական կորուստի ազատագրման տարեդարձ», մի շատ կարևոր ու մեծ առավելություն էր տեսնում Հայաստանի՝ ՍՍՀՄ-ի կազմի մեջ գտնվելու, պետականություն ունենալու իրողության մեջ: «Խ. Հայաստանը մեծ առավելություն մը ունի Արտասահմանի վրա, հայերը հոն կզգան թե մտածող և գործող մարդկության մեկ մասն են իրենք», թե «... ժողովուրդը տիեզերական շարժումի մը մասնակցելու գիտակցությունը ունի»⁷:

⁴ «Ապագա», Փարիզ, 1930, № 7:

⁵ «Ապագա», Փարիզ, 1926, փետ. 13:

⁶ «Երևան», Փարիզ, 1928, դեկտ. 9:

⁷ «Ապագա», Փարիզ, 1933, № 5—6:

Հիրավի, հայ գրականությունը բռնում է զարգացման նոր ճանապարհ՝ սոցիալիստական ռեալիզմի գրականության ճանապարհը: Ճիշտ է, սկզբնապես այդ ճանապարհը ունեցավ նաև խոչ ու խուժիր, ճախուժյուններ ու վրդապաններ, նորի որոնման ուղիների կորցնում-գտնումներ, բայց ձևավորվում ու կայունանում է նոր գրականությունը այնպիսի գրողների ջանքերով, ինչպիսիք էին Չարենցն ու Բակունցը, Իեմիրճյանն ու Զորյանը, Մահարին ու Թոթովենցը և ուրիշներ:

Որպես ողջ սովետական գրականության գլխավոր ուղղություն կամաց-կամաց արմատանում ու հիմնավոր է դառնում սոցիալիստական ռեալիզմի մեթոդը, որը հաջորդ տասնամյակներում դուրս է գալիս երկրի սահմաններից, ստանում համաշխարհային բնույթ:

Սոցիալիստական ռեալիզմի ու սովետական գրականության բնորոշ բազմաթիվ առանձնահատկությունների մասին խոսելը հեռուն կտաներ, մի քանի խոսք ասենք միայն նրա մի հատկանիշի՝ բազմազգ բնույթի մասին:

Հայտնի է, որ սոցիալիստական ռեալիզմի գրականության առաջադրություններից մեկն այն է, որ գրականությունը պետք է լինի ձևով ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական: Արդեն վաղուց ձևակերպված՝ ձևով ազգային, բովանդակությամբ՝ համամարդկային պահանջը սոցիալիստական ռեալիզմի գրականությունը նորովի է բովանդակավորում, համամարդկայինը անվանելով սոցիալիստական: Հիրավի, սոցիալիզմ կառուցող ժողովրդի գրականությունը հենց այդպես էլ պետք է բովանդակավորվեր, քանի որ սոցիալիստական բնորոշումը իր մեջ ներառում է համամարդկային իդեալների բովանդակավորումը:

Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական պահանջը սկզբնապես թելադրվեց սովետական գրականության բազմազգ բնույթից: ՍՍՀՄ-ի կազմավորման առաջին օրվանից պետական ու գրական ղեկավար մարմինների, կուսակցության գլխավոր հոգսերից մեկը գրական քաղաքականության մեջ եղել է հոգատար օժանդակությունը ազգային գրականությունների զարգացման գործին: Հաշվի նստելով արդեն գրական մեծ պատմություն ու ավանդներ ունեցող ժողովուրդների հետ, մշտապես խրախուսվել են փոքր ազգերի գրական առաջին քայլերը, և հոգատար ու խրախուսիչ վերաբերմունքը տասնամյակների ընթացքում հասցրել է այսօր այն նվաճմանը, որ ձեռք են բերել մինչև հեղափոխությունը անգամ գիր ու գրականություն չունեցող ազգերը: Օրինակներ չփնտրելու համար կարող ենք հիշել միայն թեկուզ կիրգիզ Չինգիզ Այթմատովի, բալկար Կայսին Կուլիևի ու դաղստանցի Ռասուլ Համզատովի անունները:

Եվ այն, որ այսօր ոչ միայն մեր ընթերցողը, այլև օտարերկրացին չի կարող պատկերացնել ժամանակակից սովետական գրականությունը առանց այս անունների, հենց այս փաստը ինքնին պերճախոս է:

Ազգային գրականությունների զարգացման մեջ ազգային ձևի, որպես հաջողության միակ պայմանի կիրառման անհրաժեշտության գիտակցությամբ էին կատարվում գրական-կազմակերպչական գրեթե բոլոր աշխատանքները սովետական գրականության նշանավոր դեմքերի կողմից: ՍՍՀՄ-ի ստեղծման առաջին տասնամյակի վերջում միայն հնարավոր եղավ միավորել գրական ցրիվ ուժերը, առանձին գրական խմբակներն ու միությունները և ստեղծել սովետական գրողների մեկ միասնական միություն, նրա ներսում ունենալով, իհարկե, ազգային միությունները, որոնք կատարելով իրենց առաջին համա-

գումար-հավաքները, 1934-ին հավաքվեցին ՍՍՀՄ գրողների առաջին համագումարին, Մոսկվայում: Խոսուև վկայություն է նաև այն փաստը, որ համագումարին մասնակցող 597 պատվիրակները ՍՍՀՄ 52 ժողովուրդների գրականության ներկայացուցիչներ էին:

Սովետահայ գրականության գնահատման ու արժեքավորման վկայության արտահայտությունը կարելի էր տեսնել թեկուզ հենց համագումարում նրա ներկայացուցիչների նկատմամբ եղած վերաբերմունքի մեջ: Համագումարին մասնակցում էին Վահրամ Ալազանը, Ակսել Բակունցը, Ազատ Վշտունին, Նորայր Դաբաղյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Մկրտիչ Զանանը, Հաջիե Ջնդին, Զապել Եսայանը, Ստեփան Զորյանը, Հարություն Մկրտչյանը, Դրաստամատ Սիմոնյանը, Եղիշե Չարենցը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Նաիրի Զարյանը, Գուրգեն Մահարին, Վաղարշակ Նորենցը, Վահան Թոթովենցը: Հայ գրողներից համագումարում ելույթ են ունենում Շիրվանզադեն, Բակունցը, Դեմիրճյանը, Չարենցը, Զարյանը, Դաբաղյանը: Համագումարի վարչության անդամ են ընտրվում չորս հայ գրողներ (Ա. Շիրվանզադե, Հ. Հակոբյան, Վ. Ալազան, Գ. Սիմոնյան):

Համագումարը նախագահող Մաքսիմ Գորկին իր ելույթում հատուկ ուշադրություն է դարձնում այն փաստին, որ «սովետական գրականությունը միայն ուսական լեզվի գրականությունն է, դա համամիութենական գրականությունն է: Որովհետև եղբայրական հանրապետությունների գրականությունները, տարբերվելով միայն լեզվով, ապրում ու աշխատում են նույն գաղափարի բարերար ազդեցությամբ», և որ «մենք իրավունք չունենք անտեսելու ազգային փոքրամասնությունների գրական ստեղծագործությունը միայն այն պատճառով, որ մենք ափելի բազմաթիվ ենք: Արվեստի արժեքը չափվում է ոչ թե քանակով, այլ որակով: Եթե անցյալում մենք ունեցել ենք հսկա Պուշկին, այդ դեռևս չի նշանակում, թե հայերը, վրացիները, թաթարները, ուկրաինացիները և մյուս ազգերն ընդունակ չեն տալու գրականության, երաժշտության, նկարչության, քանդակագործության մեծագույն վարպետներ»⁸:

Գորկին ծանոթ էր հայ գրականությանը վաղուց: Նրա խմբագրությամբ էր լույս տեսել «Հայ գրականության ժողովածուն» Մոսկվայում, 1916 թ.: 1928-ի հուլիսին Գորկին լինում է Հայաստանում, ծանոթանում ժողովրդի կյանքին և, բնականաբար, գրականությանը, հանդիպումներ է ունենում տարբեր վայրերում, գրում է ճանապարհորդական նոթեր, տարբեր առիթներով գնահատում է հայ գրողների գործերը: Հուշագրողները հիշում են, որ Չարենցը չի թաքցրել իր ուրախությունը, երբ համագումարում նախագահողը նրան ձայն տալիս ասել է՝ խոսքը տրվում է բանաստեղծ Եղիշե Չարենցին, և ոչ թե հայ բանաստեղծ Չարենցին: Ուրեմն Չարենցը արժանացել էր համընդհանուր ճանաչման և ոչ թե միայն Հայաստանի, այլև Սովետական Միության բանաստեղծն էր, ավելին՝ պարզապես բանաստեղծ, մեր դարի մեծագույն բանաստեղծներից մեկը, ինչպես իրավամբ կոչել էր նրան Լուի Արագոնը՝ մեկը համագումարի արտասահմանցի հյուրերից:

Խորհրդային մեծ երկրի բանաստեղծը լինելու գիտակցությամբ էր կազմաված Չարենցի համագումարյան ելույթը, որի գլխավոր հարցադրումը ազգային գրականությունների գոյության ու զարգացման խնդիրն էր: «Ներկա համագումարում դրսևորվող ամենանշանակալից երևույթը, իմ կարծիքով,

⁸ Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 311:

ազգային գրականություններին վերաբերող գեկուցումներն են...»⁹ — այսպես էր փնտրում Չարենցը համագումարի դերը, ավելացնելով, թե «այդ մեր համագումարի ամենախոշոր գրական արդյունքներից մեկն է, որի նշանակությունը ներկայումս դժվար է գնահատել ըստ արժանվույն»։ Չարենցն իր ելույթում կանգ է առնում մեծ ու փոքր ժողովուրդների իրավահավասարության, եղբայրության ու համատեղ ստեղծագործական աշխատանքի, ազգային սահմանափակությունից դուրս գալու և այլ հարցերի վրա։ «Հոկտեմբերյան հեղափոխությունը մեզ ցույց տվեց, որ դասակարգային հանիքալիզմից ազատագրված ժողովուրդների համար գոյություն չունեն մեծ և փոքր ազգություններ, այլ կա իրավահավասար ժողովուրդների եղբայրական կոլեկտիվ, ժողովուրդներ, որոնք միմյանցից տարբերվում են միայն «ձևով», բայց ոչ երբեք իրենց ընդունակություններով կամ ստեղծագործական աշխատանքի բովանդակությամբ»¹⁰, և որ «մարդկային մշակույթը անցյալում և այժմ ազգային առումով մեկուսացած, ներփակված, սահմանափակ, ինքնաբավ կուլտուրաների «սիմֆոնիա» չէ...»։ Չարենցը մեծ տեղ է հատկացնում սովետական շինարարության ընդհանուր նվաճումների մեջ ազգային կուլտուրաների (և՛ ներկա, և՛ անցյալ) նշանակությանը։ «Սակայն ինչքան կհարստանար մեր ստեղծագործական փորձը, եթե մենք, Խորհրդային Միության բազմալեզու գրողներս, սովորեինք նաև միմյանցից։ Որքան էլ փոքր լինեն մի ժողովուրդ և նրա գրականությունը, վերջինս չի կարող չունենալ իր ինքնատիպ, եզակի, անկրկնելի նրբերանգը, այն, որ հատուկ է միմիայն տվյալ գրականությանը և նրա լավագույն ներկայացուցիչներին»։ Չարենցը տալով ուսուս, ուկրաինացի, վրացի, հայ բանաստեղծներ Պաստերնակի, Տիտոնովի, Սելվինսկու, Բաժանի, Ռիլսկու, Տիչինայի, Տարիձեի, Մահարու անունները, գտնում է, որ նրանց արվեստում «կա մի բան, որ հատուկ է միմիայն նրանց և այդ տեսակետից նրանք բազմացնում են խորհրդային ողջ պոեզիայի ստեղծագործական փորձը»¹¹։

Ասենք, որ Չարենցը նկատի ուներ ոչ միայն ներկայի գրողներին, այլև անցյալի ժառանգությունը։ ՄՄՄ-ի բոլոր ժողովուրդների անցյալի ժառանգության լավագույն մասի քննադատական յուրացումը սովետական գրողների կողմից «միայն կարող է նպաստել սովետական գրականության աճին ու զարգացմանը», — գտնում էր Չարենցը։ Ինչ-որ շափով կարծես շարունակում էր Չարենցի միտքը համագումարյան իր ելույթում Ակսել Բակունցը, կատարելով մի նուրբ դիտողություն. «Այստեղ մենք լսեցինք Շևչենկոյի, Ռուսթավելու, Հովհաննես Թումանյանի մասին և այլն։ Ծս պետք է ասեմ, որ ճիշտ չի լինի հիշատակել այդ անունները՝ չավելացնելով, որ դրանք պատկանում են բոլոր ժողովուրդներին։ Ծս՝ հայ գրողս, նրանց համարում եմ իմ հարազատը այնպես, ինչպես Թումանյանին։ Ծս Ռուսթավելուն համարում եմ նույնպես ինձ հարազատ գրող, ինչպես Խորենացուն, — նրա ստեղծագործությունը արդեն մտել է մեր ընդհանուր գանձարանը»¹²։ Ազգային գրականությունների լավագույն պայմանն է և կարող է զարգացման նոր խթան հանդիսանալ։ Նոր, սովետական գրականության զարգացման գործում Չարենցը նույնպես կարևոր է համարում մեր երկրի տարբեր ազգերի լավագույն գրականության ներկա

⁹ Ե. Չարենց, Երկերի ժող., հ. 6, էջ 267։

¹⁰ Նույն տեղում, էջ 269։

¹¹ Նույն տեղում, էջ 273։

¹² Ա. Բակունց, Գրականության մասին, Եր., 1959, էջ 1

ու անցյալ ժառանգության հետ փոխադարձ ծանոթացումը՝ թարգմանություններով, ստեղծագործական փորձի կենդանի փոխանակման, հանդիպումների, գրույցների, քննարկումների և այլ եղանակներով:

Ասեմք, որ արդեն 20-ականի երկրորդ կեսից մեզանում սկսվել էր նման մի շարժում: Սովետահայ գրական կյանքի տարեգրության էջերը մեզ հուշում են, որ ՍՍՀՄ ժողովուրդների գրական կապերը գնալով ամրանում են, փոխադարձ այցելություններն ու թարգմանությունները հաճախակի են դառնում: Հայաստան են ժամանում գրողներ Եվրոպայից, ՍՍՀՄ տարբեր հանրապետություններից, հայ գրողներն են գնում մյուս հանրապետություններ, ելույթներ են լինում և փոխադարձ թարգմանություններ, լույս են տեսնում թարգմանական արձակ ու շափածո գրքեր: Այսպես, կարող ենք հիշել ուս գրողների հետ հանդիպումները Երևանում, հայ գրողների այցը Մոսկվա, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի գրողների երեք հավաքները՝ Երևանում, Քբիլիսիում ու Բաքվում, Գորկու, Սերաֆիմովիչի, Արդազիանիի, Իվանովի, Ճոնքաձեի, Լեսկովի, Լորդքիրանիձեի, Տարիձեի, Բեխերի, Ռեմարկի, Ստավսկու, Բեդնու, Շոլխովի, Ֆադեևի ու մյուսների գրքերի հայերեն թարգմանությունները հենց միայն ՍՍՀՄ-ի ստեղծման առաջին տասնամյակում: Այս ընթացքը բնականաբար շարունակվում է առ այսօր, և գնալով, բոլորիս հայտնի է, նոր թափ է առնում: Եվ եթե ուրիշ օրինակներ ու փաստեր չհիշենք, թերևս բավական է միայն մի քանիսը՝ արդեն ավանդություն դարձած տարբեր հանրապետությունների գրականությունների օրերը ուրիշ հանրապետություններում, հավաքներն ու տասնօրյակները Մոսկվայում կամ ուրիշ քաղաքներում, մեր թարգմանչաց տոնը, կամ Սայաթ-նովայի ու Վահան Տերյանի օրերը և այլն: Այս բոլոր միջոցառումները օգտակար են մի քանի տեսանկյունից՝ նախ մեր ժողովուրդների բարեկամության ամրապնդման, ապա՝ գրականության փոխադարձ հարստացման և, վերջապես, ազգային գրականությունն ու ժողովրդի պատմությունը սեփական շեմքից հանելու, աշխարհին ներկայացնելու տեսանկյունից:

Այսօր, ինչպես մյուս ազգերի լավագույն գրողներին, հայ գրողին նույնպես կարողում են բազմաթիվ լեզուներով և հայ հին ու նոր արժեքները դառնում են ՍՍՀՄ ու աշխարհի ժողովուրդների սեփականությունը: Կարծում ենք, պակաս կարևոր չէ այստեղ այն հանգամանքը, որ հայ գրողը այսօր մեծ երկրի գրողն է:

Հենց այստեղ պետք է տեսնել սովետական գրականության բազմազգ բնույթի մի էական առանձնահատկությունը: Առանձին ազգային գրականություններն հնարավորություն ունեն անմիջական, բնագրային թարգմանություններ կատարելու մի քանի ուրիշ լեզուներից, սակայն տիրապետել բոլոր լեզուներին և թարգմանել բոլոր լավ գործերը, անշուշտ, անհնար է: Այստեղ է, որ ազգային գրականությունները օգնության կարիքն են զգում մի ընդհանուր լեզվի, որ իրենց մեծ եղբոր՝ ուս ժողովրդի լեզուն է: Այդ լեզուն դառնում է ՍՍՀՄ տարբեր ժողովուրդների համար փոխադարձ հաղորդակցության, նաև ազգային գրականության տարածման լեզու, միջնորդ մի օղակ, ազգային գրականությունները իրար ու աշխարհին հասցնելու լավագույն միջոց:

Իր սկզբնավորման առաջին տասնամյակներից մինչև այսօր սովետական ուս գրականությունը, ուս գրողները, հետևողականորեն կիրառելով լենինյան ազգային քաղաքականությունը, մշտապես թարգմանում են ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը, մեկնաբանում և պրոպագանդում նրանց լավագույն արժեքները, հնարավորություն ստեղծելով՝ ճանաչելու և թարգմանելու

իրար: 1933 թ. Գորկու առաջարկութեամբ ստեղծվում են գրողների առանձին խմբեր՝ հանրապետութունների գրականութունները ուսումնասիրելու համար: Այդ խմբերում էին այնպիսի նշանավոր գրողներ, ինչպիսիք էին՝ Օ. Յորշը, Պ. Պավլենկոն, Ն. Տիխոնովը: Նրանք լինում են Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում, Դաղստանում, Ուզբեկստանում և ուրիշ տեղերում: Այդ խմբերի նպատակն էր տեղերում գրական կյանքի կազմակերպումը և լավագույն գրական երկերի ընտրութունը՝ ուսերեն թարգմանելու համար:

Ազգային գրականութուններից ուսերեն թարգմանութունների պետական հետևողական պլաններ ունեն բոլոր հրատարակչութունները, այդ նպատակով լույս է տեսնում առանձին ամսագիր՝ «Դրուժբա նարոդով»-ը:

ՍՍՀՄ ժողովուրդների կամ օտար գրական լավագույն արժեքների ուսերենից հայերեն թարգմանութունների հետ հիշենք, թե ուսերենի միջոցով ինչպիսի ճանաչում են գտել մեր՝ հայ գրականութեան անցյալ ու ներկա արժեքները:

Արդեն 20-ականի կեսերից հայ գրողների ուսերեն թարգմանութունները հաճախակի էին դառնում, իսկ 1939-ին տեղի ունեցավ մի աննախադեպ իրողութուն մեր գրական կյանքում: Սովետական Միութեան տարբեր հանրապետութուններում առանձին-առանձին նշվում է «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի 1000-ամյա հոբելյանը: Լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրութուններ տարբեր լեզուներով: Սեպտեմբերին տեղի են ունենում հոբելյանական հանդիպումներ Մոսկվայում ու տարբեր քաղաքներում, իսկ Երևանում՝ հանդիսավոր նիստ և ՍՍՀՄ գրողների միութեան վարչութեան 7-րդ պլենումը՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին: Նիստում, պլենումում և այլ առիթներով ելույթներ են ունենում և զեկուցումներ են կարդում Սովետական Միութեան բազմաթիվ նշանավոր գրողներ՝ Ա. Ֆադեևը, Վս. Իվանովը, Ռ. Ռզան, Յա. Կուպալան, Պ. Տիշինան, Վ. Կիրպոտինը, Ս. Վուրդուևը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Հ. Օրբելին, Ս. Շերվինսկին, Վ. Կավերինը, Պ. Անտակուսկին, Շ. Դադիանին, Ա. Մաշաշվիլին և ուրիշներ, ամենատարբեր ազգութունների ներկայացուցիչներ:

Սեպտեմբերի 15-ին «Պրավդան» իր առաջնորդողը նվիրում է էպոսի 1000-ամյակին, իսկ «Լիտերատուրնայա գազետան»՝ ամբողջ համարը: Բարձր գնահատելով հայ ժողովրդական հերոսական էպոսի գաղափարական-գեղարվեստական արժեքը և նրա դերը ժամանակակից արվեստի զարգացման մեջ, «Պրավդան» գրում էր. «Այդ տոնակատարութեանը մասնակցում է ամբողջ սովետական ժողովուրդը: Պոեմի հերոսական կերպարները մտել են սովետական գրականութեան և կուլտուրայի ընդհանուր գանձարանը: Դրանք հարստացնում են գրողների, պոետների, նկարիչների ստեղծագործութունը՝ մեր միութեան բոլոր հանրապետութուններում: Սովետական կուլտուրայի միջոցով «Սասունցի Դավիթը» մտնում է համաշխարհային կուլտուրայի օրբիտի մեջ և դառնում է մարդկութեան հերոսական մեծ էպոսի մի մասը»:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստը լույս տեսավ հայերեն և թարգմանվեց ուսերեն ու ՍՍՀՄ ժողովուրդների բազմաթիվ լեզուներով և հիրավի, մտավ «համաշխարհային կուլտուրայի օրբիտի մեջ»:

Ազգային գրականութունները ՍՍՀՄ-ի բոլոր ժողովուրդներին ու աշխարհին ներկայացնելու այդ քաղաքականութունը շարունակվեց հետագա տասնամյակներում: Հենց միայն հայ գրողների, հայ մշակույթի նշանավոր դեմ-

քերի համամիութենական ու երբեմն էլ համաշխարհային առումով հորեկյան-
ները (Մ. Մաշտոց, Սայաթ-Նովա, Հ. Քումանյան, Ավ. Իսահակյան և այլն)
համոզիչ օրինակներ են:

Ազգային մշակույթները ուսաց լեզվով մեր երկրի ու աշխարհի տար-
բեր ազգություններին ծանոթացնելը երբեմն ունենում է այնպիսի նշանակու-
թյուն, որ սովյալ ժողովրդի գրականության նկատմամբ հետաքրքրությունը մե-
ծանում է այնչափ, որ ցանկություն է առաջանում թարգմանություններ կատա-
րել բնագրից, ուստի և սովորել հենց այդ լեզուն:

Արզնի դարասկզբից հայ միջնադարյան ու նորագույն գրականության
թարգմանությունները միջազգային ճանաչում բերեցին հայ գրականությանը:
Սովետական տարիներին թարգմանական այդ ավանդույթը շարունակվեցին՝
հայ գրականության առջև նոր հորիզոններ բացելով: Աշխարհին նորովի ներ-
կայացան միջնադարի մեր հսկաները՝ Նարեկացին, Քուչակը, Սայաթ-Նովան:
Մեր դասականների հետ միաժամանակ եվրոպայի տաղերը երկրներում այսօր
լույս են տեսնում սովետահայ գրողների ստեղծագործությունների անթուղիա-
ներ ու առանձին հատորներ, որոնց թարգմանությունները կատարվում են և՛
հայերենից, և՛ ռուսերենից:

Սովետական Միության բոլոր ժողովուրդների համար ուսաց լեզուն դառ-
նում է մի յուրօրինակ կամուրջ՝ գրական և հասարակական բոլոր կապերի հա-
մար և այդ լեզվի իմացությունը պարզապես անհրաժեշտություն է: Սովետա-
կան նշանավոր գրող, պետական մրցանակի դափնեկիր Նոդար Դումբաձեն լավ
է բացատրել այդ հանգամանքը. «Մեզ՝ սովետական մարդկանց համար դա
պարզապես ևս մեկ լեզվի տիրապետում չէ, մայրենիին զուգընթաց, այնպես,
ինչպես ասենք անգլիերենի կամ ֆրանսերենի: Դա մի կապող օղակ է, բարեկա-
մություն և համագործակցության հուսալի կամուրջ, դա միջոց և ուղի է լայն
հեռատաններ դուրս գալու համար, առանց որի արվեստագետին սպառնում է
զավառական անխուսափելի սահմանափակվածություն»: Այսօր շիմանալ ուս-
սաց լեզուն, շարունակում է Դումբաձեն, նշանակում է ոչ միայն քեզ զրկել Պուշ-
կինի, Լեոնտովի, Տոլստոյի, Դոստոևսկու, Շոլխոմի ու մյուս մեծերի բը-
նագրերի նրբությունները, գեղեցկությունները զգալու բավականությունից ու
հաճույթից, այլև ուղացումով ծանոթանալ աշն արժեքներին, որ ստեղծում են
ժամանակակից նշանավոր գրողները, շիմանալ կամ շատ ուշ իմանալ այն
ստեղծագործությունները, որ լույս են բնծայում Բիկովը, Գոնչարը, Մաթևոս-
յանը, Այթմատովը և ուրիշ գրողներ, որոնց հաղորդակցվում ենք ռուսերենի
միջնորդությամբ¹³:

Սովետական գրականության բազմազգ բնույթի, նրա ինտերնացիոնալ
էություն արդյունք է տարբեր ազգությունների գրականությունների զարգաց-
ման այսօրվա աստիճանը, որ միասնական՝ սովետական գրականության տես-
քով ճանաչում է գտել ամբողջ աշխարհում: Այսօր սովետական գրականու-
թյունը հպարտանում է այնպիսի գեղագետ գրողների անուններով, ինչպիսիք
են Ռասպուտինը, Մեծելայտիսը, Բոնդարևը, Աստաֆևը, Բելովը, Պրոսկուրի-
նը, Զալիգինը, Աբաշիձեն, Այթմատովը, Դումբաձեն, Շուկչինը, Մաթևոսյանը
և ուրիշներ:

Գնալով բարձրանում է սովետական բազմազգ գրականության միջազգա-
յին հեղինակությունը: «Լիտերատուրնայա գազետայի» 1982 թ. փետրվարի 17-ի

¹³ «Լիտերատուրնայա գազետա», 1982, նոյեմբերի 3, № 4902:

համարում «Սովետական լիտերատուրա» ամսագրի գլխավոր խմբագիր Սավա Դանգուլովը բերում է խմբագրության ստացած նամակներից քաղվածքներ, տալիս է անուններ (Կոլդուել Ֆահգ, Գիլյեն, Սարոյան, Սնուու, Շատոնե, Ջեգերս, Թրուայա, Իվաշկևիչ, Բենյո և ուրիշներ), որոնք բարձր են գնահատում սովետական ժամանակակից գրականությունը, ՍՍՀՄ տարբեր ազգերի գրողների ստեղծագործությունները: Այսպես, Ռոժե Շատոնեն իր սիրած գիրքը համարում է Համգատովի «Իմ Դաղստանը», շեխ գրող Լադիսլավ Բենյոն բարձր է գնահատում մեր արձակը, «ուր զգացվում է սեր և նվիրվածություն մեր ժամանակին»: «Դրա համար էլ, — գրում է նա, — ես հաճախ եմ վերընթերցում Շոլոխովի «Մարդու ճակատագիրը»... կամ Այթմատովի ստեղծագործությունները: Այդ գրքերը հաստատում են մարդկային հոգևոր արժեքներ, որոնց մասին պետք է խորհել»: Ավստրալիացի նշանավոր արձակագիր Ռալֆ դը Բուասյերը հաղորդելով իր տպավորությունները Բորիս Վասիլևի «Ցուցակներում նըշված չէ» վեպի մասին, գրում է. «Վասիլևը ցույց է տալիս, թե ինչպիսի հսկաներ կարող են դառնալ մարդիկ սոցիալիզմի օրոք... Ես չեմ կարող մոռանալ այդ վեպը: Այն չափազանց տպավորիչ է, համոզիչ ու ճշմարտացի: Ես ուզում եմ Վասիլևին անել լավագույն կոմպլիմենտը, որ կարող է անել գրողը գրողին. կուզեի այդ գիրքը ե՛ս գրած լինեի»:

Սովետական գրականությունը ոչ թե առանձին գրականությունների մեխանիկական մի գումար է, այլ միասնական մի որակ, որ թելադրվում է գաղափարական-գեղարվեստական միավնական սկզբունքներից, սոցիալիզմ կառուցող միասնական ընտանիքի հավասար անդամը լինելու գիտակցությունից, հասարակական-քաղաքական ու հոգևոր իդեալների միասնությունից ու միաժամանակ ազգային մտածողության, ավանդների, պատմության բազմազանությունից: Հետևաբար մի բարդ որակ է, ուր տարբերությունները հարստության վկայությունն են, նույնությունները՝ միասնության:

Պատահական չէ, որ գրական քննադատությունը վերջին մեկ ու կես տասնամյակում հաճախակի է անդրադառնում սովետական գրականության որակական քննությանը, նրա առանձնահատկությունների բացահայտմանը, հատկապես նրա բազմազգ բնույթին, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական էությունը, ինտերնացիոնալ ոգուն, ազգային առանձնահատկություններին ու գաղափարական միասնությանը: Այդ են վկայում Մոսկվայում, Լենինգրադում և ուրիշ քաղաքներում տեղի ունեցած գիտական կոնֆերանսներում կարդացված զեկուցումները, այն լայն հետաքրքրությունը, որ վերոհիշյալ խնդիրների նկատմամբ դրսևորում են մեր նշանավոր տեսաբաններն ու գրականության պատմաբանները՝ Մ. Ալեքսևեր, Գ. Լիխաշովը, Լ. Տիմոֆեևը, Մ. Խրապչենկոն, Ա. Մետչենկոն, Ա. Բուլչմինը, Վ. Շչերբինան և ուրիշներ, այն փաստը, որ առանձին քննադատ-գրականագետներ ամբողջովին նվիրվելով այդ հարցերի ուսումնասիրությանը, մասնագիտացել այդ բնագավառում (Ի. Անիսիմով, Գ. Լոմիձե, Մ. Պորխոմենկո, Լ. Նովիչենկո և ուրիշներ): Լույս են տեսել բազմաթիվ ժողովածուներ ու մենագրություններ՝ նվիրված սովետական գրականության մեջ ազգայինի և համազգայինի փոխհարաբերությանը, ուր քննվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ազգային ավանդների և այսօրվա գրականության համար նրանց ունեցած նշանակության, ազգային գիտակցության զարգացման, ազգային խարակտերի և հոգեբանության հարցերը, այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «ազգային գեղարվեստա-

կան գիտակցութիւն», «ազգային իրականութիւն», «ազգային լեզու և մտածողութիւն» և այլն:

Այս ընդհանուր հետաքրքրութիւնը անշուշտ հավաստումն է մեր բազմազգ գրականութեան խորութեան և հարստութեան, նրա անընդհատ, դիալեկտիկ շարժման, միասնական, համամարդկային բարձր գրականութեան ստեղծման հարատև ընթացքի, մի ընթացք, ուր ձևով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական սկզբունքը առավել կայունանում է և գաղափարական-գեղարվեստական ընդհանրութիւնը չի խանգարում, որ ծնվեն ու զարգանան ազգային ավանդներից եկող գեղարվեստական նոր ձևեր:

Սովետական գրականութիւնը, որ ուսական հարուստ գրականութեան շուրջ համախմբված բազմազգ գրականութիւնների միասնական օրգանիզմ է, անընդհատ հարստացումներ է ստանում ինչպես ազգային գրականութիւններից, այնպես էլ աշխարհի գրականութիւնների լավագույն օրինակներից, թարգմանելով ու թարգմանելով հարստանում է՝ օգտագործելով գեղարվեստական նվաճումների հարուստ փորձը:

Իր համամարդկային իդեալներով, նպատակասլացութեամբ, մարտնչող բնույթով, գեղարվեստական նվաճումներով սովետական բազմազգ գրականութիւնը համաշխարհային գրականութեան մեջ զբաղեցնում է պատվալոր ու առաջնակարգ տեղ:

В. А. ГАБРИЕЛЯН — Советская литература как литература многонациональная. — Кратко прослеживая процесс становления и развития литературы социалистического реализма, автор статьи характеризует основные черты многонациональной советской литературы. Советская литература рассматривается автором не как сумма отдельных национальных литератур, а как органическое единство, опирающееся на общность идейных и художественных принципов, общественно-политических целей, высоких гуманистических идеалов, роднящих равноправные социалистические нации, объединенные в единую братскую семью. По своим выдающимся идейно-художественным достижениям многонациональная советская литература занимает важнейшее место в мировой литературе нашего века.